**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

26 հունվարի 2026 թվականի N 98-Ա

**ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ԱՐՈՏԱՎԱՅՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48 և 76, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հոկտեմբեր 28-ի «Արոտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» թիվ 1477-Ն որոշումով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի մայիսի 22-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքի արոտավայրերի և խոտհարքերի օգտագործման համար վճարի չափը սահմանելու մասին» N 62-Ա որոշումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով Տաշիր համայնքի սեփականությունը հանդիսացող 06-008-0329-0003 կադաստրային ծածկագրով 2.96054հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Անդրանիկ Գևորգի Ղազարյանին:

2.Անդրանիկ Գևորգի Ղազարյանի հետ կնքել արոտավայրի վարձակալության պայմանագիր 3 տարի ժամկետով, տարեկան 19.060 (տասնինը հազար վաթսուն) ՀՀ դրամ վարձավճարով:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հունվարի 26

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2026 թվականի N 99-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՆԱԶԵԼԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԱԼԲԵՐՏԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Նազելի Մարտիրոսյան Ալբերտի»-ի 2026 թվականի հունվարի 26-ի N55-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Նորաշեն,Վ. Սարգսյան փողոց, թիվ 2 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Նազելի Մարտիրոսյան Ալբերտի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հունվարի 26

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 հունվարի 2026 թվականի N 100-Ա

## ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐ ԱՆԻ ՆՈՐԱՅՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԱՆՆԱ ՆՈՐԱՅՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՌԱՖԻԿ ՆՈՐԱՅՐԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասով , Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով, «Տեղական ինքնակառվարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, հիմք ընդունելով Տաշիր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից հանձնաժողովի 2026 թվականի հունվարի 21-ի նիստի N1 արձանագրությունը և Իրինա Սուլիկոյի Պողոսյանի դիմումը (մուտք՝ 09.01.2026-ի ՔԴ 08-26)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1. Թույլատրել օտարել անչափահաս երեխաներ Անի Նորայրի Պողոսյանին, Աննա Նորայրի Պողոսյանին և Ռաֆիկ Նորայրի Պողոսյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատակող ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք. Տաշիր, Գետափնյա փողոց, թաղամաս 2 հասցեում գտնվող 0,069 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասը (կադաստրային ածկագիր՝ 06-008-0043-0016):

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հունվարի 26
ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

29 հունվարի 2026 թվականի N 101-Ա

**ՍՏԵՓԱՆ ԱՎԵՏՅԱՆԻՆ ՓՈԽԱԴՐԱՄԻՋՈՑԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**1.ՀՀ Տաշիր համայնքի ղեկավարի որոշման կարգավորման առարկան.**

Ստեփան Ավետյանը, հանդիսանալով փոխադրամիջոցի գույքահարկ վճարող սուբյեկտ, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կարգով չի կատարել փոխադրամիջոցի գույքահարկ վճարելու պարտականությունը, ինչի կապակցությամբ 2026 թվականի հունվարի 12 -ին « Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» ենթակետի հիմքով Տաշիրի համայնքապետարանի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ՝ գույքահարկի գանձման հարցի քննության նպատակով:«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված և իրականացված վարչական վարույթի ընթացքում գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ օբյեկտիվ քննության արդյունքում բացահայտելով գործի բոլոր հանգամանքները, վարչական մարմինը հաստատված է համարում հետևյալը.

**2. Վարչական ակտը ընդունելու հիմք հանդիսացող փաստերը**. Համաձայն Տաշիրի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական,եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի կողմից տրված տեղեկանքի և շարժական գույքի կադաստր վարող մարմնի կողմից տրամադրված փոխադրամիջոցների հաշվառման և գնահատման տվյալների՝ քննարկվող Տաշիր համայնքում հաշվառված «ԳԱԶ 31029 »(« GAZ 31029») մակնիշի, 41SS657 հաշվառման համարանիշի փոխադրամիջոցը հանդիսանում է Ստեփան Ավետյանի սեփականությունը,որը, իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հարկային օրենսգրիք համաձայն, հանդիսանում են հարկվող օբյեկտ:

Նշված փոխադրամիջոցի համար 2017-2025 թվականի համար վճարման ենթակա գույքահարկը կազմում է 106.580 (հարյուր վեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ, որից 80.000 (ութսուն հազար ) ՀՀ դրամ՝ որպես ապառք, 26.580 (քսանվեց

հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ:

2026 թվականի հունվարի 12-ին «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի առաջին մասի «բ» կետի հիմքով հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2026 թվականի հունվարի 26-ին հրավիրվել են վարչական վարույթի լսումներ, որին մասնակցելու նպատակով պատշաճ ծանուցվել է Ստեփան Ավետյանը չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:

**3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.** ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք պարտավոր է օրենքով սահմանված կարգով և չափով մուծել հարկեր, կատարել պարտադիր այլ վճարումներ: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ գույքահարկը սեփականության իրավունքով նշված օրենքի երրորդ հոդվածում նշված անձանց պատկանող հարկվող օբյեկտ համարվող գույքի համար սույն օրենքով սահմանված կարգով և չափով համապատասխան բյուջեներ վճարվող ուղղակի հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից:Համաձայն ՀՀ հարկային օրնսգրքի 239-րդ հոդվածի՝ փոխադրամիջոցների գույքահարկը հարկ վճարողներին սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող փոխադրամիջոցների համար սույն բաժնով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության համայնքների բյուջեներ վճարվող տեղական հարկ է, որը կախված չէ հարկ վճարողների տնտեսական գործունեության արդյունքներից: Համաձայն իրավահարաբերության ծագման պահին գործող «Գույքահարկի մասին»ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և համամասնությամբ, գույքահարկի գումարը վճարվում է համայնքի վարչական տարածքում հաշվառված փոխադրամիջոցների համար հարկվող օբյեկտի հաշվառման վայրի համայնքի բյուջե: Համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի՝ հարկի վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հարկ վճարողը կամ հարկային գործակալը վճարում է տույժ՝ ժամանակին չմուծված հարկի գումարի 0.04 տոկոսի չափով: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը, որպես սեփական լիազորություն, օրենքով սահմանված կարգով կազմակերպում է գույքահարկի գանձումը: Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս: Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի, «Գույքահարկի մասին» ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ,ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ,«Վարչարարության հիմունքների և վարչակական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ, 58-60-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ստեփան Ավետյանից հօգուտ Տաշիր համայնքի բյուջեի գանձել 106.580 (հարյուր վեց հազար հինգ հարյուր ութսուն) ՀՀ դրամ՝ որպես Տաշիր համայնքում հաշվառված «ԳԱԶ 31029» («GAZ 31029») մակնիշի, 41SS657 հաշվառման

համարանիշի փոխադրամիջոցի համար վճարման ենթակա գույքահարկի գումար,որից 80.000 (ութսուն հազար ) ՀՀ դրամ՝ որպես տուգանք, 26.580 (քսանվեց հազար հինգ հարյուր ութսուն ) ՀՀ դրամ՝ որպես պարտականությունը չկատարելու արդյունքում հաշվարկված տույժ: Հաշվեգրել և բռնագանձել տոկոսներ և տուգանք մինչև պարտավորության փաստացի կատարման օրը ներառյալ:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Տաշիր համայնքի ղեկավարին կամ դատական կարգով ՀՀ վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:

3.Սույն որոշման պահանջները կամովին չկատարելու դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման ՀՀ ԱՆ ՀԿԱ ծառայության միջոցով անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն իրականացնում է Տաշիր համայնքի ղեկավարը:

5. Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման մասին օրենքով սահմանված կարգով իրազեկման հաջորդ օրվանից:

6. Գույքահարկը պետք է վճարվի ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչության Տաշիրի համայնքապետարանի 900275084029 հաշվարկային հաշվին:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հունվարի 29

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

30 հունվարի 2026 թվականի N 102-Ա

# «ՆԻՏԻՄ » ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նիտիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունվարի 29-ի N56- 26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, 4/1 հասցեում գործող «Նիտիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Տիգրան Արշակյանի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2026 թվականի N 103-Ա

## «ՆԻՏԻՄ » ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նիտիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2026 թվականի հունվարի 29-ի N57- 26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, ք Տաշիր, Երևանյան փողոց, թիվ 226,228 հասցեում գործող «Նիտիմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գործադիր մարմնի ղեկավար Տիգրան Արշակյանի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 հունվարի 2026 թվականի N 104-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ «ՎԱՌԻՆԱ ԱՆԱԽԱՍՅԱՆ ԱՐՄԱՅԻՍԻ»-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր «Վառինա Անախասյան Արամայիսի»-ի 2026 թվականի հունվարի 29-ի N58-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Համրապետության 45 -րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Նորաշեն , Յու. Մարտիրոսյան փողոց, թիվ 12 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Վառինա Անախասյան Արամայիսի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների համար ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2026 թվականի N 105-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Գևորգ Արտավազդի Վարդանյանի (անձնագիր՝ AP0457212, տրված 07/06/2016թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Ձյունաշող, 06-064-0019-0012 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Ձյունաշող, 5-րդ փողոց, 9 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2110) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06142HYHBZYX:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2026 թվականի N 106-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Մարգարիտ Պատվականի Գրեյանի (անձնագիր՝ AR0223963, տրված 21/02/2017թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմով հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ ՝

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, 06-074-0050-0032 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Մեծավան, Անտառային փողոց, 63 հողամաս (փոստային դասիչ՝ 2112) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06132BTV7HCJ:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2026 թվականի N 107-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմեն Կառլենի Նազարյանի (նույնականացման քարտ՝ 018610493, տրված 14/08/2025թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշումով հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետը, 50-րդ, 51-րդ, 58-րդ, 60-րդ և 62-րդ կետը և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ `

1.Հայաստանի Հանրապետության, Լոռու մարզի, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր 06-008-0124-0018 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Էրեբունու փողոց, 20ա հասցեի փոխարեն տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, քաղաք Տաշիր, Էրեբունու փողոց, 20/1 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2101) հասցեն, համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06011UWALSYX:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) ՀՀ դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի վերահասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

# Ո Ր Ո Շ Ու Մ

30 հունվարի 2026 թվականի N 108-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Օնիկ Մկրտիչի Առաքելյանի (անձնագիր՝ KH1557339, տրված 15/12/2006թ.) դիմումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1) ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով և ՀՀ Լոռու մարզի Տաշիր համայնքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնքում 2026 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին» N 108-Ն որոշումով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ `

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի, Տաշիր համայնք, գյուղ Սարչապետ, 06-100-0015-0011 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գյուղ Սարչապետ, 1-ին փողոց, 4-րդ փակուղի, 6 բնակելի տուն (փոստային դասիչ՝ 2107) հասցեն համաձայն Կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքին հասցե տրամադրելու մասին քաղվածքի՝ ծածկագիր 06172KG5ZNKQ:

2.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիրի համայնքապետարանի 900275081108 հաշվեհամարին մուծել 1000 (մեկ հազար) դրամ տեղական տուրք՝ անշարժ գույքի հասցեավորման համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՐՇԱԿՅԱՆ

2026թ. հունվարի 30

ք.Տաշիր

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՏԱՇԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Տաշիր համայնք, ք. Տաշիր, Վ. Սարգսյան, 94
(0254) 2-22-41 tashirhamaynq@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2026 թվականի   N 109-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԵՐԵՑ «ԱՎԵՏԼԱՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆԻ» ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ավետլանա Սուրենի Ստեփանյանի 2026 թվականի հունվարի 30-ի N59-26 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

11. ՀՀ Լոռու մարզ, Տաշիր համայնք, գ. Նորաշեն,Կ. Դեմիրճյան փողոց, թիվ 113/1 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր «Ավետլանա Ստեփանյան Սուրենի»-ի հայտը բավարարել և նրան տալ 2026 թվականի առաջին եռամսյակի համար ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն:

2. Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Է. ԱՐՇԱԿՅԱՆ**

2026թ. հունվարի 30
ք.Տաշիր